

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐԱԶԳԻ ԴԱՐՁՈՒԱԾՆԵՐԻ

ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՈՎ, ԿԱԶՄԵՑ Վ. Ա. ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԲՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, 1910 ԳԻՆՆ Է
75 ԿՈՊ.

Վերոյգրեալ վերնագրով լոյս տեսաւ նորերս պ. Վ. Ա.-ի կազմած գրքոյկը, բաղկացած 140 երեսնատող երեսներէից, ուր երկտասարդ յօրինողը այբբենական կարգով հաւաքել-կազմել է համաթեմամբ այն բոլոր լատինական ու օտարազգի ասացուածները, թարգմանութեամբ հանդերձ և տեղ տեղ բացատրութիւններով, որ սովորաբար գործ են ածուել և տակաւին գործ են ածուում համաշխարհային թէ լրագրութեան և թէ գրականութեան մէջ: Գրքոյկիս վերջում առաջ են բերուած նոյնպէս Յունական և Հռոմէական զանազան չափերի, կշիռների և դրամների անուններ, որպէս և յատուկ անուանց ցանկ:

Այս գրքոյկը լաւ ծառայութիւն կարող է մատուցանել մանաւանդ հայ բաղմաբան հրապարակախօսներին, որոնք շատ անգամ գործ են ածում թութակաբար լատինական և օտարազգի ասացուածներ խիստ շատ անգամ չը հասկանալով ասացուածների բուն իմաստը, մանաւանդ, եթէ աչքի առաջ ունենանք այն բանը, որ այդ ասացուածները գործածող պարոններից սակաւ անձինք ծանօթ են լատինական և կամ մի ուրիշ եւրօպական լեզուին: Ել չենք խօսում սովորական ընթերցողների մասին, որոնց համար լատիններէն կամ օտարազգի բառերը ոչ թէ անծանօթ են, այլ և կատարելապէս անհասկանալի: Հետեալաբար և այսպիսի օտար բառեր կամ դարձուածներ սիրող և գործածող պարոնները՝ եթէ ուզում են, որ իրանց սովորական ընթերցողները հասկանան իրանց առաջ բերած խօսքը, շատ լաւ կաննեն, մեր կարծիքով, որ լատիններէնի կողքին հայերէն թարգմանութիւնն էլ դնեն, որ և անտալիս է մեզ ներկայ գրքոյկը, Մենք շատ անգամ առիթ ենք ու-

նեցել լսել այսպիսի իրաւացի պահանջ հայ ընթերցողների մեծամասնութիւնից:

Այսպիսի մի աշխատութեան կարիքը վաղուց արդէն զգալի էր եղած մեր գրական ասպարէզի վրայ, և ահա պ. Վ. Ա.-ի յօրինուած գրքոյկը կարող է առ այժմ լրացնել այդ պակասը՝ տալով թէ հայ գրագէտին և թէ հայ ընթերցողին այն մշտական ասացուած ճշմարտաբանութիւնները, որ բազմադարեան կիրառութեամբ մտել և անհրաժեշտ տեղ են բռնել եւրոպական մտքերի արտայայտութիւնների մէջ:

Ուստի մենք միայն շնորհաւորել կարող ենք երիտասարդ յօրինողին իւր այսպիսի գեղեցիկ և օգտակար գործի հրատարակութեամբ:

Վերջացնելով մեր այս համառօտ խօսքը վերոյիշեալ գրքոյկի մասին՝ չը մոռանանք յիշել, որ աշխատութեանս յօրինողի կազմած և գրքոյկին կցած լատիներէն լեզուի Համառօտ Քերականութիւնը չափաւոր կերպով քերականական ծանօթութիւն կարող է տալ ցանկացողին յիշեալ լեզուի սկզբնական կազմութեան մասին: Ուստի կարող ենք յանձնարարել այս գրքոյկը հայ ընթերցող հասարակութեան՝ սպասելով երիտասարդ յօրինողից աւելի և աւելի ռոտւար աշխատութիւններ հայ գրականութեան համար թէ այսպիսի և թէ ուրիշ ճիւղերին վերաբերեալ: Իսկ առայժմ գրքոյկին կազմողը նոյն լատիներէն դարձուածքներից կարող է բացականչել իրան յարմար ասացուածք թէ՛ «ինչ կարող եմ կատարում եմ, թող կատարէ աւելի լաւ, ով կարող է»:

Ն. ՅԱՐՈՅ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ- ՅՈՒՄ ԹԻՖԼԻՍ 1910.

Եօթնամսնական և ութսունական թուականներին կովկասեան հայութեան մտաւոր ասպարէզում գործող ռահվիրաներից մէկը, որ մի շարք լուրջ գրականական ուսումնասիրութիւններ է տուել մեզ, հրատարակել է մի շատ կարեւոր տեղեկացոյց, որ պարունակում է եւրոպացի այն ճանապարհորդների և դիտնականների հեղինակութիւնների ցուցակը, որոնք գրել են Հայաստանի և հայութեան մասին. պ. Կոստանեանը հրատարակել է այդ իրեն յատուկ մի լուրջ յառաջաբանի հետ:

Ով հաւատում է, որ հայ ժողովրդի ապագան անարխիստների, կեանքի աւելիչների և բախախնդիր խմբակցութիւնների